# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

*/հայտերի գնահատման և հաստատման նիստի/*

*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/13»* գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Մայիսյան

30 մայիսի 2019թ
ժամը 12:00

*ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Արփինե Կարապետյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/*

Հանձնաժողովի Անդամներ՝ Մամեդ Սալոյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի. աշխատակից/*

Արտաշ Եղիկյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Մաղաքյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/*

## *1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին*

1. *Ընդունել ի գիտություն, որ*

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/13»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղ զբաղեցրած մասնա) կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

2. ***Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին***

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները:

| Հ/Հ | Մասնակիցը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| | | |
| 1 | «ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ | բավարար |

Մասնակիցը ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող իրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետը՝ *«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/13»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից** հայտարարել՝

1 չափաբաժինների մասով «ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ –ին,

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ-0*

1. *Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին*

*2.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

3. *Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

Հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ________________ Արփինե Կարապետյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
անդամ՝ ________________ Մամեդ Սալոյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Անդամ՝ ________________ Արտաշ Եղիկյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Քարտուղար՝ ________________ Սաթենիկ Մաղաքյան
/ստորագրություն